


ՔԱՆԱԿԱՆ ԱՊՐՈՒԹՅՈՒՆ


Տոնակարգի համար
 Տարեկան 10 Ֆր.
 Վեցամսյ 5 »
 Մրտաբանական համար տարեկան 12 »
 Վեցամսյ 6 »
 ԿԱՆՏԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 —) —
 Գրութիւնք եւ չեւ տրուիր
 —) —
 Ծանուցման տարի 20 անու
 րիւ է. երեք հաւանք սակ
 քանակնու համար 20 օր
 զեղէ կըլլայ :



ՇԱՐՋՈՒՄ

R. P. Kalmankarian
 (Austria)
 Mel-hilburistantsasse W.
 Vienne

Նախակ եւ դրամ գրկել
 Արագրութեան հասցէին
 —
 Редакция на вестникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՈՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՄԱՍՍՈՒՆԱՏՈՒ 3. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՋԱՆԱՑԷՔ ՉՈՒԿԵԼ

«Կարելի՞ քան է, որ հասարակական ստակները անձի մը ձեռքն ըլլան և այդ անձը անկէ խոշոր մաս մը չուտէ» :

Մեր հին սերունդի հասարակական գործունէութեան մէջ ասիկա էն բնորոշ զվճը կը կազմէ :

Ինքն ինքն քրտի հայ օրագիրները և մին թիւի մէջ զոք պիտի գտնէք «Եկեղեցւոյ երեսփոխ» մը, թաղականի մը պատմութիւնը, որ հաշիւ չի տար, և կեղծեցիկն ստակները կուտէ . . .

Արի յետեւ մը դպրոցի մը հոգաբարձուն է, որ կուզէ կլլել գաղտնական և կամուսներէն խոշոր կէ կէ մաս մը :

Երրորդ տեղ խմբագիր մըն է, որ յանուն Աէյթունի կամ Վանի սովորոց ժողոված ստակներու հաշիւը չուզեր տալ. ծախսեր, կերեր է . . .

Չորրորդ տեղ վարդապետ մը կամ եպիսկոպոս մըն է, որ «այսինչ» խոլ անկիւնին մէջ որբանոց մը կամ «արհեստաւորաց» վարժարան մը հիմնելու համար հաւաքած կըլրիկ գումարն առեր, անյայտացի է . . .

Արի յետեւ մըն ալ խեղճ ուսանողի մը համար զանձուած ստակներն են կերած :

Տեղ մըն ալ կայ, վերջապէս, ուր մարդիկ խիստ զիւրիւն միջոց մը ունին իրենց զոգութիւնը ծածկելու :

«Պ. Ա. կամ Պ. Ա. ստակին հաշիւը» :

«Ոչնչացուցինք. վասնդաւոր էր պահէլը . . . » :

Այս է հին սերունդին վերաբերումը դէպի հասարակական ստակը, ընդհանրութեան սեփականութիւնը :

Հին սերունդը կը թուած է այդ ձեւով. Բն անիքը, որուն մէջ կապէին ու նախնական կը թուութիւն կը ստանային, փողոցը, միջաւայրը, որուն մէջ ընտանիքի դրած հիմքը կը շարունակուէին. դպրոցը, ուր իբր թէ

կանոնաւոր բարոյականութիւն պիտի ստրկէին, և կեղծեցին ու հոգեւորականը, լրագիրն ու պետութիւնը . . . ամէնքը, միակ միտք մը կը փոփոխյին հին սերունդի ակաւնիւն :

«Նշարհը դմակ է, մարդը դանակ, կորէ ու կեր» :

Ահա հին սերունդին գերագոյն բարոյականը, քիչ բացառութեամբ :

Օրէնք չկար, որ պատմէր. եղածին ալ ներկայացուցիչներուն բերանը հինգ զահեկանով կը փակէին : Լրագիր չկար, որ մերկայէր. գոյները բանար : Եղած մամուլն ալ կաշառելը խիստ զիւրիւն էր. Բոսական էր «բաժանորդ» ըլլալ . . . Եւ մէնէն խիստն այն կըլլար, որ կը դադարէին այլ եւս ձեւի գովելէն :

Իսկ հասարակական կարծիքը ծնած չէր, բռնակալութեան ճնշող լուծին տակ չի կրնար երբէք յառաջաւալ առողջ հասարակական կարծիք :

Բնութեան մէջ ոչինչ անշարժէ. Ամէն բան կը շարժի. հինը կը քայքայուի, նորը կ'ածի :

Ժամանակները փոխուեցան : Բռնակալութիւնը հասաւ իր ծայրագոյն գաղաւթին : Ազատասէր ողին քանի մը տարուան մէջ սկսեց խոր աղմուկներ ձգել մեր ժողովրդին էն խոր խաւերուն մէջ :

Կաղմուկեցաւ նոր ու թարմ գա. ստակարգ մը—յեզափոխականները :

Բայց ամէն նոր հինէն կը ծնի : Յեզափոխականներու մէջ ալ երեսուցան բաղմամբ անձեր, որոնք տեսակ մը փոխանցման օգտակար կազմեցին ու կը կազմեն հին սերունդին և նորին մէջ :

Այդ հինը բերին իրենց հետ նախկին սերնդին բոլոր վաստակները նոր հասանքին մէջ : Զատակները քիչ մը հօրերուն պիտի նմանին :

Ստակներ գանձուեցան ու վերձացուեցան : Հասարակական սեփականութեան հետ խաղացին այնպէս, ինչպէս հին սերունդը կը ընէր :

Ահա հին սերունդը կարծեց

տեսնել նորին մէջ ճիշդ ու ճիշդ իր սեփական պատկերը :

Յեզափոխական շարժումը ընդարձակուեցաւ : Նորերու շարքերը քիչ քիչ սկսան պարզուիլ, յստակուիլ, մարբանալ, որովհետեւ գործին սկզբունքը սուրբ էր, վեհ էր :

Բայց հին սերունդը, որ օրօրոցէն ի վեր ստրկած էր «ուտել հասարակական ստակները», մինչեւ օրս ալ յամառօրէն կը պնդէ : «Կուտեն, կը փճացնեն ազգին ստակները» :

Կը սխալիք. լաւ մտածեցէք : Հին սերունդ—գուն այդ քու յամառ պնդումներովդ քու ներքին պնդակերպ ցոյց կուտաս աշխարհի :

Նոր սերնդին շարքերը արդէն ուրիշ բարոյականութիւն մը ձեռք բերած են, ուրիշ սկզբունքներ կը դառնանին :

Զանազէք շոկել իրարմէ հինն ու նորը. շանայէք ըմբռնել նորին մաքրութիւնը և աղատուիլ հին ախտերէն :

ՔԱՐԱ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պիյուր, 11 Փետ.

Այս օրերս հոս սովորուն բերանը լուր կը պաշտի թէ՛ մօտերս օտար տէրութիւն մը պիտի գըրուէ այս կողմերը : Չեմ գիտեր թէ որքան հիմնական է ասիկա, բայց եթէ այսպիսի բան մը ըլլայ, քրիստոնեայ ժողովուրդը խանգաւառութեամբ պիտի սօնախմբէ իր աղատագրութեան տարեդարձը թուրքին անարդ, շարժրկող կառավարութեան ձեռքէն. որովհետեւ քաղաքիս քրիստոնեայ ազգաբնակիչներն ալ ինչպէս թուրքիոյ ամէն կետերուն վրայ, և նախկին կոշտ ու անամօթ հարուստներուն, ամէն օր կը յստարկայ «թուրք ու շաղկոն» անամօթ լրբութիւնները : Անցեալները թուրք որիկայ մը քրիստոնեայ ազգիկ մը բռնութիւններ ու առեւանդեր է. «տէրէ

պէյի» իսլամ մըն ալ քրիստոնեայ տղայ մը դաշունով սպաննած էր, կրից գոհացում չի տալուն համար : Եւ ասոնք բոլոր անպատիվ կը մնան, որով թուրք հասարակութիւնը սանձարձակ համարձակութիւն առած, իր յրբութիւնները կը շարունակէ, և եթէ այս այսպէս դեռ տեւէ, հաւանական է որ ընդհանուր խառնաշըփոթութիւն մը առաջ գայ, ընդհարումներ ըլլան քրիստոնեայ և իսլամ տարրերու մէջ, և ան տեսնելի քաղաքական տէրութիւնները միջամտեն և Պէրսիան ալ Լիբանանի բաղդին արժանանայ :

Զարմանալին այն է որ, իսլամ մեծամասնութիւնն ալ փոփոխող է օտար միջամտութեան մը և վարչութեան մը հաստատումին, և ժամ առաջ կը սպասեն որ Անգլիան և կամ Գաղթան գրաւէ աս կողմերը : Պատճառը հարցուցի քանի մը ծանօթ իսլամներու «ճու պու րէտիֆիլ» քէն գուրթութեամբ իջլին, պատասխանեցին, և իրաւունք ալ ունին : Տեղացի թուրքերէն 3—4 վաշտ զօրք զրկուեցաւ Եմէն, որոնց և ոչ մէկը վերագարձաւ, և նորէն և թթալու վրայ են :

Երթուն բարով . . .

Գանք քաղաքիս հայկական փոքրիկ զաղութիւն : Ասոնք հաղիւ թէ 36—37 տեւ կը բաղկանան, և որքան որ դիտած եմ, Պէյութի հեղձօցիչ կիլիման թուրքուցած է անոնց հայկական նկարագիրը և թթացուցած ազգային և կրօնական զգացումները :

Հայերը որոնք զանազան սարսուտներու տեսն ապաստանած են հոս և վերջնականապէս հաստատուած, առանց բացառութեան ամէնքն ալ հարուստ վաճառականներ են, բայց եկու տե՛ս որ ոչ շնորհքով եկեղեցի մը և ոչ ալ զոյրոց մը ունին, և եթէ ըսեմ որ սմէնքն ալ անխիղճ ու անզղայ մարդիկ են, մեղք գործած չեն ըլլար :

Հինէն ի վեր հաստատուած սօսփորութիւնով մը կրօնապաշտի վանքն է որ իր մէջէն վարդա-

պետ մը ու վարժապետ մը զրկե-
լով, անոնց կրօնական ու մտա-
ւոր պէտքերը կը հոգայ. տեղացի
հայը կուտ մը անգամ չի ծախսեր
անոնց և չեմ գիտեր թէ իրենց
ստակը ի՞նչ բանի համար կը գի-
զեն: Արդէն հազիւ թէ տարին
անգամ մը եկեղեցի կերթան, և
հոն գտնուած աղքատաց դանձա-
նակին ալ կը խնայեն իրենց լու-
ման:

Եթէ պատահմամբ աղքատ կամ
զաղթական հայ մը քաղաքս,
պատառ մը հասց և կամ գործ մը
փնտռելու գայ, մեր ջնջերը ա-
մենեւին երեսը չեն նայիր: Ձեռն
թողուր որ մուրայ, ինչ որ ի-
րենց պատիւին կը գայ ինչ եղեր,
և ոչ ալ կողմնեն անոր գործ մը
գտնելու: Եւ երբ իրենց աջակ-
ցութեանը դիմուի, առանց ամբը-
նալու կը պտռան, «բեզի ո՞վ ը-
սաւ որ հոս գաս. ուրկէց եկար
նորէն հոն գնաց», և իրօք ալ ե-
կողը ետ կը ճամբեն:

Հապա երուսաղէմէն եկած վար-
դապետը ի՞նչ կընէ պիտի հար-
ցնէք: «Տէվէճի նէ հալաէ քի
տէվէլէր նէ՛ հալաէ օլտուրար»: Շատ
լաւ կը յարմարի մեզի հա-
մար այս առածը: Ներկայ վար-
դապետը որ Պոլսեցի մըն է, միակ
բնաբան մը ունի. «կե՛ր, ա՛րբ
և ուրախ լեր»: Բնաւ չի հետա-
քրքրուիր իր հօտին բարոյական
և ազգային զգացմունքներով:

Առտուընէ մինչեւ իրիկուն
վանքին անկիւնը քաշուած իր
բնաբանը կը գործադրէ, կիրա-
կիէ կիրակի պատարագ մը կընէ,
և հոն կը լինայ իր բոլոր
պարտականութեան գործադրու-
թիւնը: Իր հօտին ազգային և
կրօնական բխցած զգացումները
արթնցնելու համար մինչեւ հի-
մակ երկու բառ խօսած չէ եկե-

ղեցիին բեմէն:
Կը զարմ- ք Երուսաղէմի
միաբա՛ լոսաս անիմաստ կար-
գադրութեանց վրայ. անիկա
կրնար փոխանակ ներկայ վար-
դապետ, Մատթէոս Գայրքեճա-
նի, աւելի կարող և օգտակար
մէկը զրկել, օրինակ տանելով
կաթոլիկներէն, սրոնց մօտ շատ
ամօթահար են: քայց կըսեն թէ
ամենէն յարմարը աս է եղեր.
Եթէ անանկ է, վայ է եկեր մեր
գլխուն:

Քայց գլխաւոր մեզքը միայն և
միայն կը ծանրանայ տեղիս աղ-
գայիններուն վրայ:
Կախարիչը իրեն յարմար ա-
մանը գտած է:

Նիզակ

Եւաջ, 21 Փետր.

Այս առաւօտ ժամը Եօթ ու կէ-
սին քաղաքիս մէջ ալէտաբեր
լուր մը տարածուեցաւ: Ամէն ք
կայարան կը վազէր, ուր արդէն
անհամար բազմութիւն մը խրու-
նուած՝ անհամբեր կը սպասէր շո-
գեկառքին հասնելուն: Ա՛յլ օր-
ուան Պուքրէշէն՝ Մաշ մեկնող զի-
շերային ճեպընթաց կառախում-
բը, քաղաքէն քսան վայրկեան
հեռաւորութեամբ, Պրնովայի եւ
Ջուրայի կայարաններուն մէջ,
թիւնէլէն երբ գուս ելած էր,
մեքեւավարներուն անհոգութեան
պատճառաւ, գէճէ կը շեղի, և
տասնի չափ վակօններ իրարու
վրայ իյնալով, ջարդու փշուր
կըլլան: Ճամբորդները վայնա-
սուն մըն է կը ձգեն, փախչիլ
անկարելի կըլլայ, և շատեր կը
վիրաւորութիւն ծանրապէս:

Այս ահաւոր աղէտքին լուրը
քաղաք հասնելուն պէս, բացա-
ռիկ կառախումբ մը կը փութան
զրկել դէպի ալէտքին վայրը, որ

քանի մը ժամ ետքը կը վերա-
դառնայ, իր հետ բերելով տաս-
նը եօթը վիրաւորեալ և երեք
մեռեալներ: Մարտիկներէր այս
զժառագ զոհերուն անասանը.
մէկուն բաղուկը ինկօժ էր, միւ-
սին զլուխը մարմինէն շատուած,
ուրիշի մը ամբողջ ոսկրները
կտոր կտոր եղած ու մորթը պա-
տաւած. իսկ մեռածներուն մար-
մինը սեփ սեւ եղած էր: Վիրա-
ւորեալները քաղաքիս Ս. Սրբի-
տօնի հիւանդանոցը վերադրուե-
ցան, սրոնց մէջէն ոմանք հոն
մեռան: Կորուստը բաւական կա-
րելու է. տակաւին ամէն օր նոր
նոր զիտակներ ու վիրաւորեալներ
քաղաքըս կը բերուին:

Ս. Ե. Ն.

Ք Ր Ո Ն Ի Կ

Փետ. 14ին, կիրակի օր, Թիֆլի-
սի մէջ կատարուել է Ներսէսեան
վարժարանին տարեկան հանգէ-
սը: Գարոցիին հիմնադիր Ներսէս
Ե կաթողիկոսի հոգեհանգստեան
պաշտօնը կատարելէ ետք, ներ-
կաները զպրօց առաջնորդուե-
ր են ուր հանդէսը կատարուել է:
Հանդէսը սկսեց է երգերով
ուրկէ ետքը վարժարանին աշա-
կերտներէն մին Ներսէսի յիշա-
տակին ներքոյ մը կարդացեր է:
Տեսուչը Ս. Բալաղեան զպրօցին
ուսումնական մասին վերաբըրեալ
տեղեկագիրը կարդացեր է
ուրկէ երեւցեր է որ անցեալ
շրջանին մէջ վարժարանը ունե-
ցեր է 676 աշակերտ, 67,661 ըր-
ծախք և 70,734 ըրլ. եկամուտ,
իսկ վարժարանին անձնակազմի
զուամարը յնվր. 1 ին հասած է
224,968 ըրուրիլ. ուրիշ տեսնա-
խօսներ ալ եղեր են սրոնցմէ

ետքը Թիֆլիսի առաջնորդ Գէորգ
արքեպ. Սուրենեան աշակերտ-
ներուն մրցանակներ բաշխելէ
անձամբ: Հանդէսը վերջացել է
երգերով ու նուագներով:

—Նոյն օրը կաթողիկոսեան հայոց
Բարեգոծական ընկերութիւնը
ընդհ. ժողով գումարեր է 40 ան-
գամներու ներկայութեան: Ներ-
կապուած հաշիւէն երեւցեր է
որ, ընկերութիւնը իր եկամու-
տին մեծագոյն մասը գործածե-
ր է յօդուա զանազան զպրօցներու
հայ օտանողներուն, ազգ. գրա-
դարանին պահպանման և միմի-
այն 900 ըրուրի չքաւոր տառապ-
եալներու համար:

—Ղազարէն «Մշակոյի կը գրեն.
«Հաստատ աղբիւրներից տեղե-
կացանք, որ մեր պատուացի մօտ
800 տուն սխնդի մահմադական-
ներ արգէն թոյլատու լինին ևն
ստացել զաղթելու Թուրքիա՝ հաս-
տատվելու այնտեղ անտէր և ա-
մայի մնացած հոգերի, այդ ինքի
և արօտա տեղիներ լրաց, որոնք
աղատ են մնացել քրիստոնեայ
սողաբանակութեան հեռանալուց
յետոյ»:

—Կ. Պոլսէն «Մշակոյի կը գրեն
թէ Երուսաղէմ քաղաքում նախ-
կին Պատրիարք Իզմիրլեան Անդ-
լիոյ թագաւորին կողմէ իր տան
պատուակալ տաներէց «Aumônier
honoraire» անուանուել է:

—Թիֆլիզի բանտին մէջ փետր.
14ին հանդիսարարպէս բանտա-
յին զրապարանին բացումը կա-
տարուել է: Գրադարանը Թուե-
րէն Հայերէն և Վրացերէն գրք-
քեր ու թերթեր կը պարունակէ:
Հայերէն թերթերու մէջ միմիայն
«Մշակոյ կայ եղեր առ այժմ»:

—Պ. Գ. Ջանչեանի «Եղբայրա-
կան օգնութիւն Թուրքիոյ Քիսո-
տած հայերուն» ժողովում ին

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ց Տ Օ Ն Ը ()

Սիրելի՛ հայրենակիցներ,

Հինէն, մեր փառքի օրերէն մա-
ցած շատ սօներ ունինք մենք, ո-
րոնց մէջ սակայն բո՛ւն ազգայինը
եւ հայ սրտերուն է՛ն մօտիկը «Վար-
դանանցն» է:

Ասիկա որ եւ իցէ եկամուտ Սուրբի
մը մասունքին նուիրուած յիշատակ
մը չէ, ոչ ալ հայ աշխարհակալի մը
տիրապետութիւնը անմահացնող հան-
դէս մը:

Ասիկա սօնն է իսկապէ՛ս ժողովըր-
դական պատերազմի մը ուր, բռնա-
պետի մը արիւնի համար ունեցած
կատաղի ծարաւը եւ կամ երկրակա-
լութեան մոլեգին ցանկութիւնները
չեն իրէք դերակատար:

Այս պատերազմին մէջ զազափարը
եւ մի միայն զազափարն է որ, հայ
ազգի հարազատ զաւակներուն ամ-
բողջը միակ գրօշակի մը ներքեւ կը
համախմբէ, իր ներքին ու արտա-

() Վարդանանց հանգէսին սոթիւ
չ րտասանուած բանախօսութիւն:

քին թշնամիներուն դէմ անկող կուր
մղելու համար:

Պարսիկ բռնակալութեան պիղծ
քոյրներուն, խղճի անորակի
բռնակալութեան անոնի հակադե-
ցութիւնն է որ հայ ժողովուրդի ա-
մուր հաւատքին մէջ կը պայթի այ-
սօր: Մարդկային տարրական իրա-
ւունքներու խղզումին դէմ արձա-
կուած հզօրագոյն ազադակն է ա՛-
ռուր այձապանգ կը գտնեն ամբողջ
հայութեան ըմբօստացումն ու ազըս-
տամբութեան ոգին:

Մէկ կողմէն մինչդեռ Ջրադաշտի
արիւնկալի լակոսները արդարու-
թեան և իրաւունքի զգացումներն
իրենց մէջ ստակեցուցած, կերպին
հայութեան հոգին ու սիրտը ծախու-
տանել, անդին հետզհետէ աճող վե՛հ
սրտամտութիւն մը, ժողովրդային
ներքին զլտակցութիւն մը, կուգայ
կը ցնցէ, կարթնցնէ հայ ազգու-
թիւնը եւ զանի կը մղէ դէպի վճռա-
կան շարժում մը սր արիւնի մէջ մի-
այն կրնայ այլ ևս կանց անուի:

Մենքի՛լ ազգովին և կամ՝ տէր
մալ իրենց խղճի ազատութեան, ա-
հաւասիկ հայերուն ուխտն ու վճիռը
զոր կերթան գործադրել Աւարայրի
դաշտին վրայ:

Թո՛ղ Արտաշէսներ սփօրն ցնորք-

ներով անընդհատ պատերազմներ
մղեն, թո՛ղ իրենց զօրքերուն թիւը
այնքան շատցնեն որ, անոնց նե-
տերը արեւին լոյսը խափանին. նո-
րէ՛ն չեն կրնար հայ ժողովրդին սրբ-
աին մէջ բնակիլ անանկ՝ ինչպէս քաջ
Վարդանը որ ժողովուրդին անկեղծ
ձգտումներուն իսկական մարմնա-
ցումն է հոս. ա՛յն ժողովուրդին, որ
իր հոգին ու կաշին վրայ կը զգայ
պարսիկ բռնութեան հայածանքը եւ
կուզէ, ամէն գնով, ինքն այ իր
սուրը շողացնել թշնամիի գլխուն
վրայ:

Եւ իրաւ որ ժողովուրդը, կամ թէ
ըսենք ամբողջ, սրբան արմար, հա-
մակերպող ու սարուկ է իր անդի-
տակցութեանը մէջ, այնքան, և
աւելի, յամու, ընդվզող, ու ան-
գուսպ կը գտնայն երբ իր գիտակ-
ցութիւնը կարթնանայ, երբ իր շա-
հերուն վտանգութիւնը ալկի մը կը
հասկնայ, երբ իր հաւատքին, կեան-
քին, պատիւին կորուստը կը զգայ
զրական կերպով:

Եւ բռնակալները բնական է որ
վախնան, զարիւրով սարկացած. խա-
ւար չղթանալով կաշկանդուած ժո-
ղովուրդի մը սասանկ գիտակից գարթ-
նումէն:

Հանսթօն, Յրանսայի արտաքին

գործոց նախկին նախարարը, ի սկզ-
բան կը կարծէր թէ հայը՝ սողուն ան-
դին ցրուած, իր շահին ու վնասին
անտեղեկալ, ազգային գողտփորէ
զուրկ ժողովուրդ մէն է. ու երբ մէկ
օր կըսեն իրեն, թէ ընդհակառակը՝
հայ ժողովուրդը իր բրածին թողա-
ծին գիտակցութիւնն ունի, զազա-
փարի ուժով մը նետուած է կոտի
դաշար, յանկարծակի կուգայ եւ իր
սփոքրործ բարեկամին համար ուսա-
ղող մը ունենալով, «c'est la mort de
la turquie», «ստակալ Թուրքիոյ մահը
կը նշանակէ» կը բացազանչէ:

Արգարեւ այն շարժարուած ժող-
ովուրդը որ զազափար մը կը դաւանի,
որ իր թշուառ գրութիւնով կը հե-
տաքրքրուի, որ իր ցաւերուն հիմ-
նական պատճառները անգամ մը
հասկցած է, ա՛յ ևս թեւերը ծայրած-
յի նստիր, դեռ ու գարման կը փնտռէ
իր վշտերուն, իր արիւնը ծծողները
բզկի բզկի բնիկ կաշխատի. եւ կե-
րոյն որ անոնք իր սուրին ու կրու-
կին տակ վերջացնեն իրենց գաղջիկ
կեանքը:

Ս՛լ չի ճամբերը, հարստահարէ
վամբիներու վրայ կուզէ նետել
ոտնալով, անսահման անձնաբացու-
թեամբ յեղափոխութեան կը փաթ-
թուի եւ, իր արեւնովը՝ յաջորդ սե-

խմբագրութիւնը սպեր է իր յոնկար ամսոյն մէջ ստացած նուէրներուն ցանկը: Այս հրատարակութիւնէն կը տեղեկանանք որ, խմբագրութիւնը ուսաց դեպքանին հետ բանակցութիւններ է սկսած չորրորդ հայ-ուսական սրբանոց մը բանալու, որուն համար 5,000 ռուբլի ուղարկած է. երկրորդ և երրորդ սրբանոցներուն գոյութիւնը ապահովելու համար ալ 10,000 ռուբլի զրկուած է: Երրորդ սրբանոցը բացուել է Միտի վանքին մէջ: Ասկէ զատ 2,000 ռուբլի զրկուած է Պոլսոյ ուսական գեղարարին վանի տառապող հայերուն համար, որ այժմ շարհուրելի օրով է արիւն:

— Պարսի մէջ 30,000 ռուբլի հանգանակուել է յատկապէս որբարինամ գործին համար:

— Երկրորդից մտա գանձուող Գուրու-Պէլէն հայ դիւղին համար զրուած էր թէ, ամբողջովին կաթովիկ եղած է: «Երկրորդ ինն» կրմանայ որ բացի վարդապետէն ոչ ոք դաւանափոխ եղած չէ. իսկ էջմէ գիւղին մէջ 10—15 տուն կրօնափոխ եղած են:

— Անցեալ կիրակի Պոլսոյ Ազգ. հիւանդանոցին ինպստ նուագահանգէս մը տրուել է Բերայի Խրեմիոն Պրանսէլի մեծ սրահին մէջ, մօտ 700է աւելի երկսնեռ ամէն ազգէ բազմութեան մը: Հիւանդանոցին ինպստ գոյտ հասոյթը 800 սակի է հասեր:

— Վանի առաջնորդական տեղապահ Տ. Ստեփան վարդապետ, Պատրիարքարանին երկրորդ հեռագիր մը զրկած է, ուր կը ծանուցանէ թէ կը Գար Պար թաղին մէջ հոռոմէականութիւնն ընդունած 126 ընտանիքներէն 115ը արդէն իրենց մայր եկեղեցւոյ

ժոցը դարձած են:

Այս գործերուն պատճառը կը համարուի Բագրևանդուն նպատակ ընդհանրական զարգացմանը:

— Անցեալ հինգշաբթի վարդանանց աստիճանով Երուսաղիմ քաղաքը մտնելու արակ. վարժարանին մէջ շքեղ զարդարական հանգէս մը կատարուել է: Երկրորդ երգուելու տառնախնամութիւններ եղեր են: Հանգէսը լուսաւորութիւնն մը թողել է ներկաներուն վրայ:

— Երուսաղիմ մեղ կը գրեն թէ, անցեալ չորեքշաբթի առաւօտ եկեղեցւոյն դռնէն կախուած զամբիւրի մէջ ալայ մը գանուել է: Երբ ինքն զուրմէն սառելու մօտ ըլլալով, եկեղեցւոյն քահանան անմիջապէս մկրտել է զայն: Կատարութեան իմաց տրուելով քննութիւնն մը բացուել է և նորաժինը պուլկար կիւնջ մը վերաբերելը հաստատուելով յանձնուել է իր մօր:

— Մարտիկոյ ազգայինը վարդանանց աստիճանով շքեղ երկրորդ մը տարբեր են: Երրորդական ու ազգային բազմութիւն երգեր երգուելու զաշնակի ու ջութակի ընկերակցութեամբ: Տեղւոյն հայ գաղութէն մէկ քանի տարնոցներ ատենախօսութիւններ կատարուել են:

— Անցեալ տարուան վարդանանց աստիճանով տեսարաններ, այս տարի կրկին երեցեր է Սիլիսթրի մէջ: Վարժարանին մէկ ուսուցիչը հանգէսի ատեն քանի մը խօսք ընել ուղեւոր, սկսել է հայհոյել վարդանանց անուան, զովբարանել վասակն ու իր հետեւորդները: Հանդիսականներուն մէջ մեծ զայնակցութիւն առաջ եկած է, ընդգրկուած խօսութիւն եղեր են, որոց միջոցին մէկ քանի լուրջ երկտա-

սարդներու համոզիչ ատենախօսութիւնները խաղաղեցուցեր են հանդիսականներն ու միջադէպը փակուել է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Ս Ե Ր Պ Ի Ս

Ռուսիոյ դեսպան ժամովսքիի յանկարծական մեկնումը Պելկրատէն, Սերպիոյ կատարական շրջանակներուն մէջ մեծ յուզում յառաջ բերել է: Ժամովսքի նախ հեռագրեր է խնդրել իր կատարականութեան որ անմիջապէս հրամայել է հեռանալ Պելկրատէն: Երբ որ պաշտօնական ընդունելութեանց ժամանակ, նոր միջադէպ մը տեղի ունեցել է: Պուլկարիոյ գործակատարը լիազօր պատիրակներու կարգին մէջ մտցուած ըլլալով, թուրքիոյ դեսպանական մայրիւնը պալատէն հեռացել է:

«Թան» Սերպիոյ քաղաքական ուղղութեան վրայ խօսելով կըսէ թէ, գիւտնագիտական այս առեղծուածներուն գաղտնիքը պէտք չէ շատ հեռունը փնտրել. միակ բառ մը կը բաւէ, և այն ալ Սերպիոյ նախկին արքայ, Միլանի անունն է:

Արդարեւ այս մարդուն Սերպիա մտած օրէն, քաղաքական անակընկալ յեղաշրջում մը տեղի ունեցաւ: Ռուսիա Միլանի վերադարձին դէմ զայրացած՝ երկարատեն թափուր ձգեց Պելկրատի դեսպանական պաշտօնը, բայց վերջապէս տեսնելով որ իր այդ բացակայութեան Սևասթոպոլս ու Գերմանիա օգտուելով, տեսակ տեսակ մեքենայութիւններ կը ներթնէ, ժամովսքիի զրկեց հոն: Այս մարդը, եկած օրէն սաստիկ ատկութիւն մը սկսաւ ցուցնել

հանգէպ Միլանի, չուզեց զայն իրեւ նախկին թագաւոր մը ճանշանալ ու մեծարել, Սերպիոյ նախարարապետին քով իսկ հեզնեց զայն և չանաց վարկաբեկ ընել: Բայց Միլան ալ իր վրէժը լուծեց չի հրաւիրելով զայն Սերպիոյ ազատութեան տարեգարձին, որուն մէջ Ռուսիա այնքան մեծ զեք մը ունեցած էր, ու ժամովսքի, իր կատարական պատիւը պահելու համար, պարտաւորեցաւ մեկնել անմիջապէս: Կացութիւնը ծանր է, կամ պէտք է Միլան հեռանայ կամ Ռուսիա վերջնականապէս ջնջէ Պելկրատի դեսպանատունը, սրովհետեւ հաւանական չէ որ Ռուսիա ժամովսքիի նորէն Պելկրատ հաստատէ առանց պահանջատանալու, և կամ նոր դեսպան մը զրկէ, որքան ատեն որ Միլանը հոն մնայ:

Կ Ի Է Տ Է

Կրէտէի Ազգ. Ժողովը իր գործը կը շարունակէ խաղաղութեամբ: Մասնաւոր յանձնախումբի մը կողմէ պատրաստուած Սահմանագրութիւնը ժողովին քննութեան ենթարկուած է: Ժողովը ընդհանուր խանդավառութեան մէջ, «Կրէտէի իշխան» տիտղոսը քուտարիկեց Սորկիոսի համար: Իւրաքանչիւր 6,000 բնակիչ մէկ երեսփոխան միայն պիտի ընտրէ, որով Ազգ. Ժողովին երեսփոխաններուն թիւը հազու 45—50ի պիտի հասնի, փոխանակ 180ի, ինչպէս կը կարծուէր մինչեւ հիմայ:

Սակայն միջադէպ մը տեղի ունեցաւ նիստին մէջ: Գրիստոնեայ երեսփոխան մը առաջարկեց որ Սահմանագրութեան ճակատը գրուի թէ Կրէտէի պաշտօնական

րունդներուն կը կատիկ իր հատարը իր գաղափարը, իր ազատութիւնը:

Այսպէս եղած է նաեւ վարդանանց պատերազմը, որուն մասնակցած են հայ երեսփոխաններն ու ծերուկը, հայոց փափաստուն ակիւններն ու մինչեւ իսկ քահանաները: Ասոր համար է որ չի մոտցուի իր ան: Զի մոտցուի իր նաեւ Քաջ-Վարդանը, վասն զի ժողովուրդին հետ եւ ժողովուրդին համար միայն կոտորած է եւ մեղած: Ամենքին աչքին մեծ է անիկա ու մեծ կը մտայ ո՛չ թէ որովհետեւ կրօնքին համար ինքզինքը զոնեց, այլ որովհետեւ այս պատերազմին մէջ, ինքը ամբողջ ցեղի մը փրկագործուելու ցանկութիւններուն կենդանի օրինակը հանդիսացաւ:

Թիւրք կատարականութիւնը սրբոյցներուն մէջէն շատ անուններ սրբեց, և հայ սրբերուն մէջէն ալ վարդանը փորձեց ջնջել: Բայց անիկա ամբողջ անկիւնաքարի մը պէտք ունեցաւ ամէն հարստի, ամէն տապալի: Եւ ժողովուրդը ինչպէս բախտանալու աւելի կը սիրէ այս սօնը, փաստիկ իր տօնն է, որուն ժողովուրդական հանդէսը, որ մեզի թէ շատ բան կը յիշեցնէ և թէ շատ բան կը սօրթեցնէ:

Նախ, այս հանդէսին առթիւ ամէն հայ կամայ ակամայ անդրուզանայ կը փորձուի ներկայի վրայ որ շատ նմանութիւն ունի անցեալին և ուրուն վրայ մասնաւորապէս կենդանի քիչիկ մը ծանրանալ:

Այս, սիրելի հայրենակիցներ, եթէ ներքին Արեւին ու Զրադուտին անունով զմեզ կը հաւանելին, այսօր Մուհամմէտին անունով է որ մեզ կը մօրթնէ, նպատակաւ պէս կը խոչընդի:

Եթէ երբևէ մտքեր զրկուեցան մեր եկեղեցին, մեր հաւատքը խելու, այսօր հովիտներ կան որոնք մեր ազգատութիւնը կուզեն շահագործել և մեր խիղճը մաւրացկանի մը առջև նետուելիք կրծոնով մը ծախու առնել:

Վերջապէս, եթէ ելլենք Յազկերտներու բանակները կարչուէր, կը թալանելին մեր երկրքը, այսօր սկար որսի մը ետեւն արձակուած չունենալու վտանակի մը պէս, քիւրտիքը, չէրթէզները, պաշտպանութիւնները կան, որոնք մեր ստացուած քննուած արքան վրայ նստելու ետք, մեր տիրութիւնն համար ալ առին, ու չի կատարան ատկալին: Աւ հիմայ բովանդակ Հայաստանը ցուատանջ տալով կու մե մը մէջ, իր է՛ն ահաւորապէս պիտի

րերը կանցնէ:

Աւելորդ է, քանի որ ամենքս ալ գիտենք, մանրամասնօրէն նկարագրել հայութեան ներկայ վիճակը որուն թշուառութեան արհաւիրքը ամենէն ստոնացած սրտերուն անգամ կակիծ կը պատճառէ և ուր է՛ն անտարբեր, է՛ն անզգայ հայ կործարին տակ անգամ կը բռնկուին յեղափոխութիւն ըմբոստացող կրակը: Բայ իս, ամենէն աւելի կարեւորն է գիտնալ, թէ քանի կերպ մասնողներ ունինք հիմայ հայութեան ներկայ տառապանքին վիճակին վրայ:

Ես պիտի ջանամ գլխաւոր երեք գասաւորութեամբ պատկերացնել ամէնքը:

Առաջինը ինքնակոչ խելացիներու դասն է. խելացիներուն որոնք մինչեւ այսօր մտանքին մտիւրը թաթխած չունին և որոնց ամբողջ շահատակութիւնը կը կայանայ ամէն յանցանք, ամէն պատասխանատուութիւն ընդհանուր հայ յեղափոխականներուն կոնակը նետուել մէջ:

Առջև յայտնական յանկերգ մը ունին իրենց բերանը, թութակի պէս զոք ըրած նախագատութիւններ, թէ ամէն շարժի միակ պատասխանատու հեղինակը յեղափոխականն է: Ժողովուրդին անունով ալ կը խօ-

սին, «պէտք է փրկել ազգը» կը թոթովին:

Ու ատիկա իրենց կեղծաբանութեան է՛ն ազատան է, որ իբրև խոչոր հայհոյանք մը կերթայ կը փակչի մաքուր յեղափոխութեան ճակատին:

Ես այնպէս կը մտածեմ որ ասոնք պարզապէս, իրենց վայրահալութիւններով կը ձայնակցին Երբորդի բռնակալին որ ի զո՛ւր, բայց եռանդուն ճիգեր բրաւ կլլեցնելու աշխարհին թէ Տաճկահայաստանի մէջ ի գործ դրուած եղեռնագործութեանց պատճառն ու պատասխանատուն հայ յեղափոխականներն են: Ասոնք կը ձայնակցին նաեւ սահմիկ կատարականութեան խոփած, փճացած պաշտօնականներուն որոնք խաբեքայ, խարդախ, խոտովարար և սճրագործ կանուանին բոլոր հայ յեղափոխականները և քստմեղի հայհոյութիւններով անպատուել կը ճգնին անոնց անունն ու յիշատակը:

Կերեւի, այս դարավերջի խելացիներուն տրամաբանութեամբ Աստուծոյ անմեղ գտնուելն է Մեծ-Դահլճը որ հրամայեց պատու պատու ընել հայութիւնը, առեւանգել, անպատուել հայ կիները, այրել քանդել հայ գիւղերը:

Անմեղ են այն վայրենի քիւրտերը

կրօնքը Օրթոդոքսութիւնն է : Արիչ շատ քրիստոնեայ երես- փոխաններ ձայնակցեցան իրեն : Իսլամ երեսփոխանները բնակա- նաբար հակառակեցան այս ա- ռաջարկին : Վիճարանութիւնը շատ երկար ու բուռն եղաւ , ու մանք ըսին թէ ամսթ է ժողովին , եթէ ան քաջութիւն չունենայ պաշտօնապէս ճանչնալու կրեոս- կան պետութեան կրօնքը : Վիճա- րանութիւնները այն աստիճան սաստկացան որ նախագահը պար- տադրեցաւ միջամտել , և առա- ջարկութիւնը 133 ձայնի մեծա- մասնութեամբ մերժուեցաւ :

ԹՈՒՂՕՆԻ ԱՂԷՏԻՐ

Պրոնսայի ծովային նախարա- րը , Լօքրուս , Թուրքի նախարա- նին աղէտքը լսելուն , անմիջա- պէս աղէտքի վայրը գնաց ման- րամասն խուզարկութիւն մը կա- տարելու : Սակայն իր քննութիւն- ները ոեւէ արդիւնքի մը չի կրցան հասնիլ , Իրիկուան դէմ Թուրքի քաղաքացիներ անստու- րագիր նամակ մը ստացաւ , ուր անիշխանական դաւադրութեան մը գոյութիւնը կը յայտնուէր , այնքան ճշգրիտ մանրամասնու- թիւններով որ կարելի չէր ճշ- տութեան տարակուսիլ : Նամա- կին մէջ գրուած էր թէ քանի մը անձեր որոշած էին ծովային նա- խարարին այցելած պահուն վա- ոտգարանը կրկին պայթեցնել : Իրաւ ալ , ուժանակի մեծկակ ծը- րար մը գտնուեցաւ վառօդարա- նին մէկ զբան քով , տասերկու փամփուռ շտեմերով :

Թէև անձուխ վառօդին սըն- տուկներուն մէջ յառաջ եկած քիմիական բաղադրութիւնները վառօդարանին պայթման պատ-

ճառ կը կարծուին , բայց ձե- ւընհաս անձեր կը կարծեն թէ մասնաւոր գիտաւորութեամբ ե- ղած բան մըն է ասիկայ , որով- հետեւ , կըսեն , այն հանգա- մանքները որուն մէջ կը գտնու- էին անձուխ վառօդի սնտուկնե- րը , Լարելի չէ որ պայթում ա- ռաջ բերեն :

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Պուլկար կառավարութիւնը ի- մացուցած է իր բոլոր քաղաքա- կան ու զինուորական պաշտօնեա- ներուն թէ , երեք ամիս ամա- կան պիտի չի կրնայ սալ , պայ- մանաժամը չլրացած փոխառու- թեան մը վճարումին պատճառաւ : Իտալական կառավարութիւնը Աստրիական կառավարութեանէն խնդրած է ճէրիպէն Թրանթա անուն անիշխանականին արտաբ- տումը : Այս անձը կը կարծուի թէ Հումպերթօ թագաւորը սպանելու փորձ կատարող անիշխանականին մեղսակիցներէն մէկն է որ Թրի- էսթէ ապստանած ըլլալ կեն- թաղուի Աստրիական կառավա- րութիւնը անմիջապէս Թրանթաի ձերբակալման հրաման տուած և խոստացած է Իտալիոյ իսկոյն արտաքսել զայն :

Ռումանիոյ երեսփոխանական ժողովին մէջ Մակեդոնիոյ նկատ- մամբ եղած հարցապնդումի մը պատասխանելով , նախագահը յայտնեց թէ , կառավարու- թիւնը միշտ փափագող եղած է Թուրքիոյ ներկայ վիճակին պահ- պանման , թէ չի կրնար առանց Սուլթանին հրամանին ոչ մէկ բանի ձեռնարկել , ցուցնելու հա- մար թէ Մակեդոնիոյ մէջ բնա- կող ուումանցիք պէտք է պաշտ- պանութիւն գտնեն Սուլթանէն Մակեդոնիոյ մէջ շահ ունեցող

միւս ազգութիւններուն թշնամա- կան յարաբերութեանց դէմ :

Փիլիպպիաններու կացու- թիւնը հետզհետէ կը ծանրանայ : Հրամանատար Օթիս աւ շարթու- ուղղակի յարձակողական դիրք ընել պիտի սկսի 25,000 մար- դով : Եւ սակայն կանխապէս վեր- ջին փորձ մըն ալ պիտի ընէ կղզեցիները հպատակեցնելու հա- մար յանձնախումբ մը զրկելով :

Պեւիքայի խնամակալ թա- գուհին ծանրապէս հիւանդացեր է , և օրէ օր առողջական վիճակը կը վատթարանայ :

Չէնընկեցութեան դեսպանա- խորհուրդը պիտի դումարուի յա- ռաջիկայ մայիս 6ին Լահէյի մէջ :

Ճիտտէի առողջապահական շղթայէն գուրս ելլելով Մէքքէ գացած ուխտաւորներու մէջ , ժանտախտի մէկ դէպք պատա- հած է : Կանոնաւոր զինուորներն ալ մասնակցեր են խոսովութեանց ու կողոպուտին : Եւրոպական հի- պատոսները հեռագրած են որ իրենց կեանքը փառնորդի մէջ է :

Սուլթանին հրամանին վրայ ա- ռողջապահական ժողովը Ճիտտէի շղթան ջնջել որոշած է , որով- հետեւ ամբողջ Հիւճազ գաւառը արդէն վարակուած է : Պոլսոյ մէջ մեծ մատանջութիւն պատճա- ռած է այս կէտը : Սուլթանին կառավարութիւնը առաջին ան- զամ է որ ամէն հեղինակութիւն կը կորսնցնէ Հիւճազի մէջ :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Փիլիպպ . Մեծաղայ — Բանա- տեղծին : — Ստացանք ձեր ան- անուն քարղը , ուր ձեր ազգը վար- մունքը հերքելու փոխարէն , դուք անսպասելի փաստ մը կու-

որոնք հայ դիակներուն վրայ պար- րենցին , և մորթած հայերուն զլուխները իրենց նիզակներուն զար- կած պատցուցին , հայ երախաները կրկին մէջ խորովեցին և գիւղա- ցիին միջնա արօրն ու հաւը թալա- նեցին :

Անմեղ է կերեւի նաեւ այնպիսի քաղաքակրթութիւնը՝ որ քար սըր- տով մը նայեցաւ մեր արիւնի ճա- հիճներուն վրայ :

Ամէն բան , ամէն ոք անմեղ է , միակ մեղաւորը հայ յեղափոխականն է՝ որուն կառաջարկին «վազ» գալ իր խելքէն :

Այս խելացիները իրենց արդի ըն- թացքով մէկ բան միայն կապացու- ցանեն , այն է՝ իրենց բացարձակ սպիտութիւնը Հայաստանի անցեալ վիճակին և յեղափոխութեան ծա- զումի հարապատ պատճառներուն վրայ :

Արհամարհելովս հանդերձ այս դա- սակարգի պատկանողները , կամաւ ծանրացայ իրենց վրայ , վասն զի գոթաղաբար օրուան մարդն են հի- մայ , և որ կողմ նետենք մեր աչքը կը նանդիպինք աստուց ծթած ար- բանեակներուն :

Երկրորդ դասը կը ներկայացնէ հայ ունեւորներու մեծամասնութիւնը որ

մեռելներու յատուկ անտարբերու- թեամբ մը դիտեց հայուն արիւնոտ վէրքը , հայ երիտասարդներուն բան- տերու մէջ լեցուելը և հայ կարիճին կախաղան բարձրանալը : Եւ հիմայ , ազգին ներկայ ճգնաժամին մէջ իւր խիղճ չընէր անիծելու այն անձնա- զոհ մարդիկը որոնք իրենց կեան- քովը կուզեն հայ ժողովուրդին ար- զար դատը վաստկել :

Խիղճ չընէր կեղծ ու պատիր զրոյց- ներով ժողովուրդը վհատեցնելու և կոկորդիլոսի արցունքներ թափե- լու :

Խեղկատակ գերասաններ , որոնք իրենց քանի մը ոսկիի կորուստը կողքան և կուզեն կլլեցնել , թէ ազգային աղէտքին համար է որ ան- կեղծ արցունք կը թափեն :

Կը մնայ երրորդ և վերջին դասա- կարգը որ ստանեակ տարիներէ ի վեր ամենաձանր զոհաբերութեամբ ազգա- յին սպասութեան շարժումը կը վարէ և որ՝ վճռական , որոշ գաղափարներ ունենալով , հակառակ ամէն արգել- քի , հակառակ ամէն ճիւղաղային ներ- քին ու արտաքին յարձակումներու զեռ կուզէ շարունակել , և պէտք է շարունակէ այն արիւնոտ ճամբան , որ ոչ կամ կանուխ հայ ժողովուրդը պիտի սանի , հասցնէ զկպի ազատ ու անկախ կեանք մը :

Ասիկայ հայ յեղափոխական դա- սակարգն է , ճշմարիտ յեղափոխական զատակարգը որ ամենէն եղբրական զէպքերուն առջև իսկ չի կորսնցնիր իր կորովն ու խանդավառութիւնը , ամենեւին չի նահանջեր վատաբար , այլ արիւնլուայ կուճքով զիմադրելով ամէն հալածանքի կուզէ ցոյց տալ աշ- խարհին , թէ հայը իր մէջ ունի մա- ջուր , տոկուն , նախապաշարմունքէ ազատ տար մը որ վրէժխնդրու- թեամբ լցուած , ուժերը ամփոփելով , փորձառու և խելացի գործունէու- թեամբ մը կրնայ հասնիլ վերջապէս իր այնքան պատած նպատակին , ո- րուն իրականացման համար բոլոր աշխարհի հիացման այժմանի անձնու- թիւն մը ցոյց տուաւ արդէն :

Այս դասակարգը սկիզբէն ի վեր մայր հաստատ համոզումը ունի , թէ մարդկային կեանքի մէջ ամէն մեծ գաղափար յայթախակ տարած է և կը սանի , միայն թէ կոկորդիլ գոթաղ- զաբար , արիւնի և զիւրակներու վրա- յէն անցնելով :

Իր միջնա հիմայ կատարած գոր- ծելէն շատերը հասարակ ու անի- մաստ խլրատումներ չլին . այլ՝ կանո- նաւոր կրօններ իրենց բոլոր զար- հուրանքով , կրօններ՝ զորս անշուշտ պիտի շարունակէ , միջնա որ ստանայ իր իրեւ մարդ ապրելու արդար իրա- ւունքը :

տաք մարդկային անորակելի յի- մարութեան :

Ի հարկէ , էֆէնտիմ , ձեռն մի- այն աստակ «խլխախտ բաներ կը սպասուի : Իւրք ուր , վսեմ պաշ- տօններ հասկցող ուր : Վստփորի ավերէն հերացած , որախօս բա- նաստեղծի ընդունակութիւնը ան- զամ կորսնցուցեր էք . «աւագ փառացի անցաւ օրի . . . » :

ՊՕՐՍԱ

Վառու 3 Մարտ

ՊՈՒՂՏԱՅ

Վառու , լիպրա 55—58 , հէքթօլ . 8.80—9.90 ֆրանք

Արապա , լիպրա 55—60 հէքթօլ . 9—11.20 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 42—50 հէքթօլ . 6.10—6.40 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վառու , 55—57 լիպրա , 6—6.65 Առապա , 55—60 լիպրա , 6—6.20

Կրեւկէ 15—20 վառու , 25—30 սոսպա կէլմէթէ սիր :

ՆԱՐԸ

Կրեւկէ 12 արապա կէլմէթէ սիր . 58—60 լիպրա , 5.40—5.80 ֆրանք

Առապա մուամլէլսի Նարուլն 21 ֆրանք հիսապը իւէ սիր :

ՕՒՆԱՐԻ ԹՈՒՂԹ

Տիրա Տիրաւու Տուամեւան կը ծա- նուցանէ թէ ի ֆ . Պոլսի Բուրլուն խանի գիւտաց , կը վաճառէ Ազգ . Հի- ւանդանոցի ամենէն ընտիր նոր տե- սակ սիկարի թուղթէն , զեղնալ գի- ներով մեծաքանակ և փոքրաքա- նակ , Բարեգործութիւնը և շահը կը պահանջեն որ ամէն հայ գործածել զայն , կան նաեւ Պօն . Վոյթու և ու- րիչ ամէն տեսակ թուղթեր : Յանձ- նարարութիւնը կը կատարուի ճշ- արի և փութով :

Отговорникъ : А. СУКЯСОВЪ
Печатня «Взаимность» Варна.

Ճշմարիտ հայ յեղափոխականը լաւ համոզուած է , թէ աստակ աղետալի պարագաներու մէջ ազգի մը կ'են մեծ , է՛ն մահաբեր թշնամին յուսահատու- թիւնն է : Աստի իր բոլոր կրցածը կընէ ժողովուրդը ոգեւորելու , խրա- շող , ցրտացող հոգիները նորէն իրեն թերեւ՛ս մոտեցնելու և վերջապէս յե- զափոխական ոգին զարթեալ և աւելի կուռ ուժով յաղթանակել սայու :

Անիկա՛ մարմնացումն է հայ ժողո- վուրդի իրձիւրուն , անիկա կենդանի բողոքն է , ընդդէմ ժողովուրդի տան- ջանքին ու գերութեան : Անիկա ճշմարիտ շարունակութիւնն է վար- դանին , որուն յիշատակը կարելի չէ աւելի արժանաւոր կերպով յարգել , քան ցոյց տալով մեր բոլոր օրաթի համակրանքը , յարգանքը զկայ ի հայ յեղափոխութիւնը զկպի ճնշուած ժո- ղովուրդներու փրկութեան միակ : Վճռական այդ միջոցը :

Թո՛ղ մեր խելացիները , մեր պատ- իրարքներն ու էֆէնտիները Սուլ- թանին ոտքը լղկ փորձեն , մենք շարունակենք մեր ճամբան զէպի մեր ճշմարիտ նպատակը . ուր կը դիմենք արդէն երկար տարիներէ ի վեր :

Հո՛ն պիտի գտնենք փրկութիւնը , հո՛ն պիտի գտնենք մեր սեղը իրեւ Ազգ և իրեւ մարդ :

ՎԱՀԱՆ ՇԱՀՐԻՄՅԱՆ

—(—)